№ 206 Նոյեմբերի 20 (Դեկտեմբերի 2) 1880 Նոյեմբերի 20 (Դեկտեմբերի 2) № 206

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թուին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետևեալ օրերից):

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միացեալ ընկերութիւն.—Ներքին տեսութիւն. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն. Թիւրքիա. Ֆրանսիա. Անգլիա. Նամակ Պարսկաստանից.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսի երեք ընկերութիւնների միանալը մեզ, ռուսաստանցի հայերիս վրա պարտք է դնում աւելի էլ եռանդով օգնել Թիւրքիայի հայերի կրթութեան գործին: Չը պէտք է մոռանանք որ Թիւրքաց Հայաստանի մէջ լուսաւորութիւնը տարածելու գործը ապագայի համար մեծ նշանակութիւն պէտք է ունենայ: Միացեալ ընկերութիւնը բացի Հայաստանի բուն հայ ազգաբնակութեան մէջ ուսում տարածելուց, պէտք է փոքր առ փոքր ջանայ տարածել լուսաւորութիւնը և Թիւրքաց Հայաստանի վայրենի ցեղերի մէջ, որոնք բնակվելով հայերի հետ միասին, մինչև այժմ չեն ենթարկվել որ և է կրթողական ներգործութեան, դարերի ընթացքում մնացին վայրենի, բարբարոս և մինչև այժմ շարունակում են նեղացնել հայերին:

Վերջապէս հայերը պէտք է մտածեն իրանց թշնամիներից իրանց համար բարեկամներ պատրաստել,—և այդ նրանք կարող են անել միմիայն նրանց մէջ լուսաւորութիւնը տարածելով:

Որպէս զի մենք մեր կողմից դրական կերպով օգնենք Միացեալ ընկերութեան գոյութեանը, հարկաւոր է նուիրատուութեան գործը հիմնել ոչ թէ պատահական, ժամանակաւոր հիմունքների վրա, այլ հաստատ, տեւողական սկզբունքների վրա:

Մենք առաջարկում ենք որ յօգուտ Միացեալ ընկերութեան նուիրատուութիւն անել ցանկացողները, փոխանակ միանուագ գումարներ տալու, աւելի քիչ տան, բայց պարտաւորվեն մշտապէս տալ, տարեկան յայտնի վճարը մոցնելով յօգուտ յիշեալ ընկերութեան: Մենք մեր կողմից ուրախութեամբ կընդունենք այդ տարեկան անդամական վճարները, և կը հասցնենք Միացեալ ընկերութեանը:

Ինչ որ Կ. Պօլսի մէջ հիմնված ընկերութիւնը անում է Թիւրքաց Հայաստանում, նոյն աշխատանքը Անդրկովկասում կարող էր յանձն առնել Բագուի Մարդասիրական ընկերութիւնը կամ այն ընկերութիւնը, որ պէտք է հիմնվի Թիֆլիսում:

Ժամանակ է արդէն մեր ինտելիգենցիային ծանր, լուրջ կերպով վերաբերվել դէպի հայերի կրթութեան գործը:

Մենք չենք քարոզում հայերին, ինչպէս այդ անում են ուրիշները, թողնել անձնական հաշիւները, թողնել կրքերը, որովհետև այդ տեսակ քարոզները ապարդիւն ենք համարում: Նոյն իսկ այդ քարոզներ անողները ամենից շատ ենթարկված են նախանձի և չար կրքերի ազդեցութեանը: Մեր միտքն այն է միայն որ ներկայ սերունդը աւելի բարոյական դարձնելը անհնարին է. այդ պէտք է հասկանանք և աշխատենք ուսում և լուսաւորութիւն տարածել, համոզված լինելով որ մենք թէև անպիտան ենք, բայց ապագայ սերունդը մեզանից լաւ կը լինի: Այո, համոզված լինելով որ մենք ինքներս մեծ պակասութիւններ ունենք, մենք պէտք է ամեն ճիգ թափենք որ ապագայ սերունդը մեզանից բաղդաւոր լինի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

25 նոյեմբերի

Երկու տարի է, որ ես հեռացայ Թավրիզից, երկու տարի է, որ թողեցի Թավրիզի Արամեան դպրոցը, որի մէջ ութ տարիէն աւելի մնալէն զկնի, թող ներվի ինձ երկու խօսք այդ առթիւ ասելու:

Իր հիմնարկութիւնից յետոյ, բաւական տարիներ, մինչև 76 թիւը, այդ դպրոցը խաղալիք է եղել միմիայն մի քանի ոգէտ միրզաների ձեռքում, որոնց զբաղմունքը եղել է սովորացնել խեղճ մանուկներին սաղմոս, աւետարան և Ջամչեան կամ Սալլանթեան քերականութիւն, թութակի պէս սերտել տալով: Միայն յիշեալ թւականից սկսած, սրբազան Անդրէաս եպիսկոպոսը աջակցութեամբ մի քանի պօլսեցի և ղարադաղցի օտարականների, յաջողեցաւ այդ ուսումնարանը առժամանակ դնել կանոնաւոր բարեկարգութեան մէջ, և մենք ունեցանք Մելիք-Յակոբեանի, Գիւլզատեանցի, Մուշեղեանցի և Խիզանեանցի նման ուսումնական ասպարիզում գործող մի քանի անձնանուէր վարժապետներ: Հաստատվեցան նոր կանոնադրութիւններ, ընտրվեցան հոգաբարձուք, հիմնվեցաւ և ազգային ընթերցարանը.—Դպրոցը մի քանի ամիսների ընթացքում ցոյց տուեց անսպասելի առաջադիմութիւն: Անցան ամիսներ, տարիներ, յանկարծ պատահում է մի անհագին աղմուկ մեր ուսումնական վարչութեան մէջ. տեղացի մի քանի խաներ կամ աղաներ ցանկանում են իրենք դառնալ հոգաբարձուներ,—ինչու մենք բնիկ Թավրիզեցիներ լինելուց յետոյ, առամբուլցիք կամ ղարադաղցիք կը լինեն մեր հոգաբարձուներ, այդ մի նամուս չէ. կամ մենք պիտի լինենք, կամ հոգաբարձութիւն բոլորովին չը պիտի լինի: Հակառակութիւնները շարունակվում են, այնպէս որ հոգաբարձութիւնը քանդվում է, և վերջապէս բանը այնտեղ է հասնում, որ Թավրիզեցիք իրենց անտեղի վարմունքով և անձնական կրքերով համարեա զզուեցնում են ուսումնարանի առաջադիմութեան անխոնջ աշխատող թէ ուսուցիչներին, թէ մի քանի անհատների և թէ հոգաբարձուներին, և այդպիսի մի խառն անկարգութեան միջոցում ուսումնարանը զրկվում է իր գլխաւոր և աշխոյժ գործիչներից շատերէն, որից յետոյ ուսումնարանը կրկին սկսում է ընթանալ կաղկաղ, հոգևարքի մէջ: Թավրիզեցոց մի և նոյն է գլխաւոր թէ ոգէտ, թաք նրա հոգաբարձուն, նրա ընթերցարանի կառավարիչը լինի միայն անունով մեծ, իսկ հոգով և բարոյականութեամբ ամենաստոր մի անձնաւորութիւն....

Թավրիզի Արամեան ազգային դպրոցը, որ համարեա առաջինն է պարսկահայերի մէջ, միշտ խաղալիք է եղել երկու հակառակ կուսակցութիւնների—ղարադաղցիների և Թավրիզեցիների մէջ, որոնց միմեանց դէմ ունեցած վատ հակումներին զոհ է եղել այդ ողորմելի հիմնարկութիւնը: Եւ ահա, այդպիսի հակառակ կուսակցութիւններից բաղկացած հոգաբարձութիւնը, ոչ թէ միայն բարոյապէս և նիւթականապէս օգուտ չէ տվել ուսումնարանին, այլ և մեծ վնասներ է հասցրել դպրոցին. մէկի ծրագիրը միւսը քանդել է, մէկի աշխատածը միւսը ոչնչացրել է: Ահա Թաւրիզի հոգաբարձութեան գործունէութեան ուղղութիւնը: Այդ է պատճառը, որ ուսանող սերունդը, ժողովրդի այդ թարմ ոյժը, զուրկ մնալով դաստիարակութիւնից, և ոչ մի աշխոյժ անգամ չէ ունենում դէպի գիտութիւնը. Նորա մէջ մեռնում է կրթութեան եռանդը: Բացի այդ, շատ անգամ նա զոհ է դառնում ոգէտ հօր կամքին, որը նրան ստիպում է մնալ մի գործի մէջ, սովորել մի որ և իցէ արհեստ, որով կարողանայ կեանքի ասպարիզում իր օրական ապրուստը հայթայթելու միջոց ունենալ: Նա ոչինչ գաղափար չունի ուսման կամ կրթութեան վրա. տէրտէր կամ վարդապետ հօ չես լինելու, ասում է որդուն.—Այդ է Թավրիզեցու կարծիքը ուսման անհրաժեշտութեան մասին, և այդ է պատճառը, որ պարսկահայը այսօր էլ նոյն խոր քնի մէջն է, ինչ որ էր մի քանի դար սրանից առաջ:

Ինչպէս լսում ենք, վերջին տարումս Թիֆլիսից և մի քանի այլ տեղերից հրաւիրված ուսուցիչներ կրկին տուին իրանց հրաժարականը: Ներկայումս միակ նեցուկ այդ դպրոցի մնացին մի քանիսի հետ հայր Մ. Փափազեանցը, որին կարելի է բացառութիւն համարել մեր ոգէտ հոգևորականութեան մէջ: Իսկ այսօր այդ արժանաւոր անձնաւորութեան վրա Թավրիզի Արամեան դպրոցի ապերախտ աշակերտներից մէկը, որի անունն անգամ յիշելու նողկանք ենք զգում, իր անխրատ զրպարտութիւններով նրա ազգօգուտ գործունէութեան վրա մուր քսելու չէ դադարում: Մենք լաւ ծանօթ ենք Գէորգ Շահնազարեանցի հետ, մենք նրա նամակը ուրիշ ոչինչ չենք համարում, եթէ ոչ անձնական կրքերով լի և հիւանդ ուղեղի մի արտայայտութիւն, և չենք էլ կասկածում, որ այդպիսի մի համբակը միայն իր սև հարստութեամբ ընթերցարանի գանձապահի պաշտօնը ստանձնելու յաջողած է:

Օրիորդական դպրոցը մինչև այսօր դեռ կանոնաւորապէս չէ ունեցել Պարսկահայը. բայց եթէ նորերումս մի օրիորդական ուսումնարան բանալ Թավրիզում յաջողվեցաւ, նա էլ երկիւղ կայ, որ շուտով զոհ կը դառնայ անմիաբանութեան: Թավրիզում այդպիսի հիմնարկութիւնները երկար չեն դիմանում: Ես անձամբ լսել եմ, թէ ինչպէս տեղացի աղաներից մէկը պնդում էր.

—Էդ ինչ մօդա է, ով է տեսել, որ աղջիկը կարդայ, միթէ յամօթ չէ. հօ նշանածի վրա գիր չէ գրելու, նրան հարկաւոր է տանը նստել և կար—բան սովորել... Ընտանեկան կեանքը Թավրիզի հայերի մէջ, իգական սեռի վերաբերութեամբ, դեռ ևս կրում է նահապետական հին, փակ ձևերը:

Երանի թէ Թավրիզի հայերը, մանաւանդ երիտասարդական թարմ տարրը, հասկանային իրանց դպրոցների ցաւալի դրութիւնը, որոնք խաւարի մէջ խարխափելով, դիմում են դէպի կորստեան անդունդը: Երանի թէ նրանք թողնէին իրանց նախանձը և ատելութեան ոգին, որը զրկեց իրանց բազմաթիւ անձնանուէր աշխատողներից, և պատճառ դարձաւ դպրոցների անկմանը: Կը յուսանք, որ պարսկահայն էլ վերջապէս կարթնանայ իր դարևոր քնից, կաշխատէ զարգանալ և ապահովել պարսկահայերի ներկան և ապագան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են որ Արդուինի հայ-կաթոլիկների եպիսկոպոսը հասել է Թիֆլիս:

Պատմում են, որ Ներսիսեան դպրոցի տեսուչ պ. Արշակ Նահապետեան, հրամայել է դպրոցի աշակերտներին, որ ոչինչ յարաբերութիւն չու-